ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/85

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Բողոքաբեր՝ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝ Դավիթ Հովհաննիսյանի,

«Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Չոբանյանի, Ա. Աբգարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բջջային հեռախոսների/սմարթֆոնների/ ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից 20.07.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝ «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պարտավորեցնել անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի հուլիսի 13-ի թիվ 7-րդ արձանագրության 7.1-րդ և հուլիսի 16-ի թիվ 8-րդ արձանագրության 9.1-րդ կետերը և հրավիրել նոր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 20.07.2020թ.-ին:

22.07.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը վերադարձվել է՝ դրանում առկա թերությունները շտկելու համար:

Նույն օրը կրկին ներկայացված բողոքը 23.07.2020թ.-ին կայացված որոշմամբ ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-Լ0-2020/85 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

29.07.2020թ.-ին և 07.082020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 29.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.08.2020թ.-ին:

2. «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ն 20.07.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է գնանշման հարցման մրցույթ սույն թվականի հունիսի 16 ին ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44 ծածկագրով բջջային հեռախոսներ/սմարթֆոնների ձեռքբերման նպատակով: Ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև իմ կազմակերպությունը՝ Ա/Ձ Դավիթ Հովհաննեսի Հովհաննիսյանը: Հունիսի 29-ին ստացել եմ ծանուցում և արձանագրություն այն մասին, որ 01.07.2020թ. տեղի են ունենալու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ: Հուլիսի 1-ին, նախապես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ, ժամը 11:48 էլեկտրոնային եղանակով, հրավերում նշված էլ-փոստին ուղարկել եմ Իմ կողմից գների նվազեցման շուրջ միաժամանակյա

բանակցություններին տվյալ պահին առաջարկվող նոր գնային առաջարկ: Հուլիսի 2-ին ստացել եմ Պատվիրատուի արձանագրությունն N5 այն մասին, որ տվյալ օրը գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ժամանակ մասնակից «Նոութբուք Սթոր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՍՊԸ) տնօրենը խոչընդոտել է գնահատող հանձնաժողովի բնականոն աշխատանքը, բանավիճելով գնահատող հանձնաժողովի անդամների, քարտուղարի և մյուս մասնակից կազմակերպության «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցչի հետ: Պահանջել և ստանալով բոլոր մասնակիցների փաստաթղթերը ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է կարծիք, որ Իմ կողմից առաջարկվող ապրանքը չունի երաշխիքային սպասարկում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում: Հանձնաժողովը որոշում է կասեցնել կասեցնել մրցույթի նիստը և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 67-րդ կետով ստուգել Իմ կողմից հայտով առաջարկվող «itel» ֆիրմային բջջային հեռախոսների սպասարկման կենտրոնը, հանդիսանում է արդյոք արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնը: Նույն օրը «ԱԴԴ» ՍՊԸ-ին հարցում է արվում (գրությունը կցվում է)՝ խնդրելով տրամադրել իսկությունը հավաստող փաստաթուղթ, այն մասին, որ «ԱԴԴ» ՍՊԸ-ն հանդիսանում է «itel» բջջային հեռախոսների արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնը: «ԱԴԴ» ՍՊԸ-ն ծանուցումը ստանալուց 1 ժամ հետո պատասխանում է, որ «Մենք հավաստում ենք, որ ԱԴԴ ՍՊԸ-ն /ՌԵՄԶՈՆ/, հանդիսանում է Itel բջջային հեռախոսների արտոնագրված սերվիս կենտրոն, սակայն հավաստող փաստաթուղթ չունենք, անհրաժեշտության դեպքում կարող ենք մեր գործընկերներին խնդրել տրամադրել այն, բայց գործընթացը ժամանակատար է /մոտավորապես մեկ շաբաթ»: Հուլիսի 3-ին Պատվիրատուն կրկին դիմում է «ԱԴԴ» ՍՊԸ-ին (գրությունը կցվում է) խնդրելով իրեն տրամադրել ՀՀ-ում «itel» բջջային հեռախոսների արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնը հանդիսանալու վերաբերյալ փաստաթուղթ, որը ստորագրված, կնքված կամ որևէ այլ ձևով հաստատված կլինի արտադրողի կողմից: «ԱԴԴ» ՍՊԸ-ն կապ հաստատելով Պատվիրատուի հետ հայտնում է, որ ունի փաստաթուղթ, որը հրապարակման ենթակա չէ, բայց Պատվիրատուին եթե այցելի գրասենյակ, ապա կարող է տեսնել այդ փաստաթուղթը, որին պատվիրատուն պատասխանել է, որ իրեն անհրաժեշտ է պաշտոնական փաստաթուղթ արտադրողից: «ԱԴԴ» ՍՊԸ-ն տվյալ պահին դիմել է արտադրողին տվյալ փաստաթուղթը ստանալու համար: Հուլիսի 14-ին «ԱԴԴ» ՍՊԸ-ն Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից պահանջվող տեղեկատվությունը (տեղեկատվությունը կցվում է): Նույն օրը Պատվիրատուն հրապարակում է արձանագրությունն N7 այն մասին, որ «ԱԴԴ» ՍՊԸ-ից արձագանք չի

ստացվել և Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները Ա/Ձ Դավիթ Հովհաննեսի Հովհաննիսյանի տվյալները՝ համապատասխան հիմքերով, սահմանված ժամկետում գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն: Հուլիսի 14-ին կապնվել եմ հանձնաժողովի քարտուղարի հետ, ով հայտնել է, որ արդեն դուրս է եկել աշխատանքից, հաջորդ օրը կնայի և կպատասխանի: Հաջորդ օրը զանգել և տեղեկացրել է, որ այո ստացել են գրությունը, բայց արդեն ուշ է նոր բանակցություններ են նշանակել և ոչինչ անել չեն կարող:

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանում է, որ ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն: Հոդված 7-ով սահմանում է, որ

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասը չի կիրառվում, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է, որ հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ընդ որում, հայտարարությունը ենթակա չէ փոփոխման: Եթե կիրառվում է սույն հոդվածի 2-րդ մասը, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է այդ սահմանափակման մասին:

4. Արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

2) սույն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մասնակցության դեպքերի:

5. Պատվիրատուի մասնակցությամբ իրավաբանական անձինք գնումներին մասնակցում են այլ մասնակիցների հետ հավասար իրավունքով, և այդ

կազմակերպություններում պատվիրատուի մասնակցության հանգամանքը չի կարող հանգեցնել այդ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 67-րդ կետով սահմանում է, որ «Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է»:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պարտավորեցնել անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի հուլիսի 13-ի թիվ 7-րդ արձանագրության 7.1-րդ և հուլիսի 16-ի թիվ 8-րդ արձանագրության 9.1-րդ կետերը և հրավիրել նոր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

3. <u>«Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 23.07.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/11066-2020 գրությամբ դիմել է «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ հնարավորություն տալով «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից 20.07.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը 29.07.2020թ.-ին ժամը 15:15-ին նիստին:

Պատվիրատուն 27.07.2020թ.-ի թիվ 372 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2020 թվականի 23 հուլիսի գրության, ներկայացնում եմ ՀՀ ԱՆ «Թրքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից թիվ ԳԲՔԱ-ԷՕ-2020/85 ծածկագրով բողոքի վերաբերյալ դիրքորոշումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուի կարիքների համար բջջային հեռախոսներ/սմարթֆոնների ձեռքբերման նպատակով 16.06.2020 թվականին N ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով՝ բաղկացած մեկ չափաբաժնից, թղթային ձևով հայտարարված մրցույթին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից): Հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է նաև՝ «Երաշխիքային ժամկետն առնվազն/տարի: Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները)»: Մասնակիցը մասնակցության հայտի հավելված 1.1-ով ներկայացրել է «Itel» ֆիրմային բջջային հեռախոսներ, նշելով արտադրողի պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի («ԱԴԴ» ՍՊԸ, (Ռեմզոն)) հասցեն և հեռախոսահամարը: Քանի որ, ընթացակարգը կազմակերպվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի, ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին հրավիրում է բանակցությունների: Բանակցությունների ընթացքում մասնակից՝ «Նոութբուք Սթոր» ՍՊԸ-ն պահանջել է հանձնաժողովի քարտուղարից (այսուհետ նաև՝ Քարտուղար) իրեն տրամադրել մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերում հրավերի պահանջների նկատմամբ տեղ գտած անհամապատասխանությունների շտկված տարբերակները: Քարտուղարը հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը, տրամադրում է պահանջած փաստաթղթերը,

որից հետո «Նոութբուք Սթոր» ՍՊԸ-ն հայտնում է կարծիք այն մասին, որ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ի կողմից առաջարկվող ապրանքը չունի երաշխիքային սպասարկում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում: Որից հետո Հանձնաժողովը կասեցնում է նիստը և նշյալ պատճառաբանությամբ, համաձայն Կարգի 67-րդ կետի որոշում է կայացնում ստուգել Մասնակցի ներկայացված տփալների իսկությունը:

02.07.2020 թվականին թիվ 325 գրությամբ Պատվիրատուն դիմում է «ԱԴԴ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Մասնակից)՝ խնդրելով սեղմ ժամկետում տրամադրել իսկությունը հավաստող փաստաթուղթ այն մասին, որ Մասնակիցը հանդիսանում է «Itel» ֆիրմային բջջային հեռախոսների արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոն: Նույն օրը Մասնակիցը էլեկտրոնային նամակով պատասխանում է՝ «Մենք հավաստում ենք, որ ԱԴԴ ՍՊԸ-ն /ՌԵՄԶՈՆ/, հանդիսանում է Itel բջջային հեռախոսների արտոնագրված սերվիս կենտրոն, սակայն հավաստող փաստաթուղթ չունենք, անհրաժեշտության դեպքում կարող ենք մեր գործընկերներին խնդրել տրամադրել այն, բայց գործընթացը ժամանակատար է /մուրավորապես մեկ շաբաթ/»: Հանձնաժողովի քարտուղարը կրկին էլեկտրոնային նամակով դիմում է ընկերությանը՝ «Հարգելի գործընկեր խնդրում եմ Ձեր կազմակերպության բլանկի վրա և տնօրենի ստորագրությամբ ուղարկել»: Մասնակիցը նույն օրը թիվ 412 գրությամբ հայտնում է, որ «ԱԴԴ ՍՊԸ-ն /ՌԵՄԶՈՆ/, հանդիսանում է Itel բջջային հեռախոսների արտրոնագրված սերվիս կենտրոն»: Ի պատասխան 412 գրության, 03.07.2020 թվականին Պատվիրատուն թիվ 328 կրկնակի գրությամբ դիմում է Ընկերությանը, խնդրելով տրամադրել արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոն հանդիսանալու վերաբերյալ փաստաթուղթ, որը ստորագրված, կնքված կամ որևէ այլ ձևով հաստատված կլինի արտադրողի կողմից: Պատասխան գրություն կամ էլեկտրոնային նամակ չստանալով 06.07.2020 թվականին Պատվիրատուն էլեկտրոնային նամակով կրկին դիմում է Ընկերությանը՝ խնդրելով բարձրացված հարցին լուծում տալ, սակայն պատասխան չի ստացվել: Ինչ վերաբերվում է, որ Մասնակիցը կապ է հաստատել Պատվիրատուի հետ և հայտնել, որ ունի փաստաթուղթ, որը հրապարակման ենթակա չէ, կնշեմ հետևյալը, ուղարկված առաջին գրությամբ Մասնակիցը հավաստում է, որ հանդիսանում է «Itel» բջջային հեռախոսների արտոնագրված սերվիս կենտրոն, սակայն հավաստող փաստաթուղթ չունի և անհրաժեշտության դեպքում կխնդրի գործընկերներից այն տրամադրելու, որը ժամանակատար է՝ մուրավորապես մեկ շաբաթ, Երկրորդ գրությամբ հավաստում է, որ հանդիսանում են նշված ֆիրմային հեռախոսների արտոնագրված սերվիս կենտրոն: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ուղարկված երկու գրության մեջ

փաստաթղթի հրապարակման ենթակա չլինելու վերաբերյալ նշում չկա արված: Իսկ ինչ վերաբերում է բողոքի մեջ նշված այն հանգամանքին, որ Մասնակիցը տվյալ պահին դիմել է արտադրողին տվյալ փաստաթուղթը ստանալու, այդ մասին Պատվիրատուն չի ծանուցվել: Արդեն իսկ, 13.07.2020 թվականին վերսկսվում է Հանձնաժողովի կասեցված նիստը և վերջինիս որոշմամբ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ի հայտը մերժվում է՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի՝ տվյալների իսկության ստուգման արդյունքում դրանք իրականությանը չհամապատասխանելու հիմքով: 14.07.2020 թվականին ժամը 12:36-ին (էլեկտրոնային փոստից արտատված էջը կցվում է):

Հանձնաժողովի նիստում կայացրած որոշման 7-րդ արձանագրությունը Քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է ընթացակարգի բոլոր մասնակիցներին, որը նույն օրը հրապարակվում է նաև gnumner.am կայքում: 14.07.2020 թվականին ժամը 16:50-ին (էլեկտրոնային փոստից արտատված էջը կցվում է) «ԱԴԴ» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստով գրությամբ ուղարկում է ООО "ТРАНССИОН ТЕХНОЛОДЖИ РУ" կողմից տրված գրությունը այն մասին, որ «Itel» Ընկերությունը հանդիսանում է Թրանսսիոն խմբի դուստր ձեռնարկություն և «ԱԴԴ» ՍՊԸ-ն հանդիսանում է «Itel»-ի հեղինակավորված սերվիս կենտրոն Հայաստանի Հանրապետությունում: Հատկանաշական է այն, որ «ԱԴԴ» ՍՊԸ-ի կայք էջում (remzone.am) նշված են մի շարք ֆիրմային անվանումներ, որոնց երաշխիքային և եզերաշխիքային սպասարկման կենտրոն է հանդիսանում «ԱԴԴ» ՍՊԸ-ն, սակայն «ItеU-ի վերաբերյալ նշում չկա արված:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ԱԴԴ» ՍՊԸ-ն սկզբնական էլեկտրոնային նամակով հավաստում է, որ հանդիսանում է «Itel» բջջային հեռախոսների արտոնագրված սերվիս կենտրոն, սակայն հավաստող փաստաթուղթ չունի, անհրաժեշտության դեպքում կարող է գործընկերներին խնդրել տրամադրել այն, բայց գործընթացը ժամանակատար է՝ մոտավորապես մեկ շաբաթ: Հանձնաժողովը հաշվի առնելով գործընթացի ժամանակատարությունը, կասեցված նիստը հրավիրում է «ԱԴԴ» ՍՊԸ-ին դիմելու հաջորդող օրվանից հաշված տասնմեկերորդ օրը՝ 13.07.2020թ.-ին, ժամը 15:00, որով կարծում ենք չի սամանտիակվել Մասնակցի գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը: Հատկանշական է այն, որ Մասնակիցը ООО "ТРАНССИОН ТЕХНОЛОДЖИ РУ"-ի կողմից 14.07.2020 թվականին տրված գրությունը ուղարկում է այն ժամանակ, երբ Մասնակիցը տեղեկանում է, որ հայտը մերժվել է, և կա վտանգ հայտնվելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ամփոփելով վերոնշյալ տեղեկությունները՝ գտնում ենք, որ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/85 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Թոքաբանության ազգային կկենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բջջային հեռախոսների/սմարթֆոնների/ ձեռքբերման նպատակով 15.06.2020թ.-ին հայտարարվել է «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր)՝ թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Բջջային հեռախոս՝ սմարթֆոն նոր, չօգտագործված, տուփերով, կրկնակի SIM, օպերացիոն համակարգը՝ առնվազն Android 6, օպերատիվ հիշողությունը՝ ոչ պակաս 2 GB, ներքին հիշողությունը՝ ոչ պակաս 8 GB, հիմնական տեսախցիկ՝ առնվազն 8 մեգապիկսել, դիմային տեսախցիկ՝ առնվազն 5 մեգապիկսել, ցանց՝ 3G,4G/LTE,Wi-Fi: Կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: *Երաշխիքային ժամկետն առնվազն 2 տարի: Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները):* Մատակարարից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար:»:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ն:

iv. Մասնակիցը հայտով ներկայացված թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկել է հետևյալը. «Բջջային հեռախոս՝ սմարթֆոն նոր, չօգտագործված, տուփերով, կրկնակի SIM, օպերացիոն համակարգը՝ Android 9.0, օպերատիվ հիշողությունը՝ 2 GB, ներքին հիշողությունը՝ ոչ պակաս 16 GB, հիմնական տեսախցիկ՝ 8 մեգապիկսել, դիմային տեսախցիկ՝ 5 մեգապիկսել, ցանց՝ 3G, 4G/LTE, Wi-Fi: Կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: *Երաշխիքային*

ժամկետն 1 տարի: Սպասարկման կենտրոնի տվյալներն են՝ հասցե ք. Երեւան, Իսահակյան 3, Հեռ. +374 10 54 02 82, +374 91 67 76 44 Աշխատանքային ժամեր, ժամը 10:00-ից 19:00՝ բացի կիրակի օրվանից:»:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.06.2020թ.-ի թիվ 3 արձանագրության 5.3-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի աբողջական նկարագրում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված ներքին հիշողությունը՝ ոչ պակաս 16 GB ենթակա է հստակեցման՝ նշելով առաջարկվող ապրանքի ներքին հիշողության ստույգ ծավալը, ինչպես նաև նշված չէ, կտրամադրվի արդյոք տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար:

vi. Նույն արձանագրության 6.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցել է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրության 5.3-րդ կետում նշված անհամապատասխանությունները:

vii. «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից որպես Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկում 25.06.2020թ.-ին ներկայացվել է թիվ 1.1 հավելվածը հետևյալ ձևով՝ «Բջջային հեռախոս՝ սմարթֆոն նոր, չօգտագործված, տուփերով, կրկնակի SIM, օպերացիոն համակարգը՝ Android 9.0, օպերատիվ հիշողությունը՝ 2 GB, ներքին հիշողությունը՝ 16 GB, հիմնական տեսախցիկ՝ 8 մեգապիկսել, դիմային տեսախցիկ՝ 5 մեգապիկսել, ցանց՝ 3G,4G/LTE,Wi-Fi: Կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: *Երաշխիքային ժամկետն 1 տարի:* Սպասարկման կենտրոնի տվյալներն են՝ հասցե ք. Երեւան, Իսահակյան 3, Հեռ. +374 10 54 02 82, +374 91 67 76 44 Աշխատանքային ժամեր, ժամը 10:00-ից 19:00՝ բացի կիրակի օրվանից: Ապրանքի մատակարարման հետ կտրամադրվի տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար:»:

viii. Հանձնաժողովի 29.06.2020թ.-ի թիվ 4 արձանագրության 5.2-րդ կետի համաձայն՝ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից հրավերով նախատեսված անհամապատասխանությունները շտկվել են:

ix. Հանձնաժողովի 01.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Նոութբուք Սթոր» ՍՊԸ-ի տնօրենը պահանջել է քարտուղարից որպեսզի իրեն տրամադրեն մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերում հրավերի պահանջների նկատմամբ տեղ գտած անհամապատասխանությունների շտկված տարբերակները: Քարտուղարը, հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը, «Նոութբուք Սթոր» ՍՊԸ-ի տնօրենին տրամադրել է վերջինիս պահանջած փաստաթղթերը, որից հետո վերջինս հայտնել է կարծիք այն մասին, որ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից առաջարկվող ապրանքը չունի երաշխիքային սպասարկում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում:

x. Նույն արձանագրության 7.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է կասեցնել «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնման ընթացակարգի նիստը և հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջը, ստուգել «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից հայտով առաջարկված «Itel» ֆիրմային բջջային հեռախոսների սպասարկման կենտրոնը, արդյոք հանդիսանում է արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոն:

xi. Հանձնաժողովի 13.07.2020թ.-ի թիվ 7 արձանագրության 6.1-րդ կետի համաձայն՝ 02.07.2020թ.-ին «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից հայտով առաջարկված «Itel» ֆիրմային բջջային հեռախոսների որպես պաշտոնական սպասարկման կենտրոն հանդիսացող «ԱԴԴ» ՍՊԸ-ին (Ռեմզոն) ուղարկվել է գրություն հետևյալ բովանդակությամբ. *«խնդրում եմ տրամադրել իսկությունը հավաստող փաստաթուղթ, արդյոք Ձեր կազմակերպությունը հանդիսանում է «Itel» բջջային հեռախոսների արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնը»:*

Նույն օրը, «ԱԴԴ» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով հավաստել է, որ վերջինս հանդիսանում է «Itel» բջջային հեռախոսների արտոնագրված սերվիս կենտրոն, սակայն հավաստող փաստաթուղթ չունի, անհրաժեշտության դեպքում կարող է գործընկերներին խնդրել տրամադրել այն, բայց գործընթացը ժամանակատար է /մոտավորապես մեկ շաբաթ/: «ԱԴԴ» ՍՊԸ-ն գրությամբ հայտնել է նաև, որ հանդիսանում է «Itel» բջջային հեռախոսների արտոնագրված սերվիս կենտրոնը:

03.07.2020թ.-ին «ԱԴԴ» ՍՊԸ-ին ուղարկվել է գրություն հետևյալ բովանդակությամբ. *«խնդրում ենք տրամադրել արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոն հանդիսանալու վերաբերյալ փաստաթուղթ»*, սակայն Մասնակցի կողմից գրությանը այդպես էլ արձագանք չի տրվել:

xii. Նույն արձանագրության 7.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջը, որոշել է մերժել «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը՝ տվյալների իսկության ստուգման արդյունքում իրականությանը չհամապատասխանելու հիմքով:

xiii. Հանձնաժողովի 16.07.2020թ.-ի թիվ 8 արձանագրության 8.1-րդ կետի համաձայն՝ բանակցությունների նիստը վերսկսվել է 16.07.2020թ.-ին ժամը 12:00-ին և ավարտվել է ժամը 12:31-ին: Մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետը (12:00-12:30) մասնակիցներ չեն ներկայացել (կամ համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչներ), իսկ էլեկտրոնային փոստի հասցեին նոր գնային առաջարկներ նույնպես չեն ստացվել:

xiv. Նույն արձանագրության 9.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ոչ մի նոր գնային առաջարկ չի ներկայացվել:

xv. ООО "ТРАНССИОН ТЕХНОЛОДЖИ РУ" ընկերության գլխավոր տնօրենի կողմից 14.07.2020թ.-ին տրված նամակի համաձայն՝ «Itel» Ընկերությունը հանդիսանում է Թրանսսիոն խմբի դուստր ձեռնարկություն և «ԱԴԴ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում է «Itel»-ի հեղինակավորված սերվիս կենտրոնը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից 20.07.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ապրանքների գնման դեպքում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը

ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Հրավերի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե մասնակիցը սահմանված ժամկետում շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար, իսկ հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Բացի այդ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը և եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա մասնակցի հայտը նույնպես մերժվում է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Թոքաբանության ազգային կկենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բջջային հեռախոսների/սմարթֆոնների/ ձեռքբերման նպատակով 15.06.2020թ.-ին հայտարարված «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի գնման առարկան է հանդիսանում «Բջջային հեռախոս՝ սմարթֆոն նոր, չօգտագործված, տուփերով, կրկնակի SIM, օպերացիոն համակարգը՝ առնվազն Android 6, օպերատիվ հիշողությունը՝ ոչ պակաս 2 GB, ներքին հիշողությունը՝ ոչ պակաս 8 GB, հիմնական տեսախցիկ՝ առնվազն 8 մեգապիկսել, դիմային տեսախցիկ՝ առնվազն 5 մեգապիկսել, ցանց՝ 3G, 4G/LTE, Wi-Fi: Կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: *Երաշխիքային ժամկետն առնվազն 2 տարի: Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները):* Մատակարարից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար:»:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ն թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկել է հետևյալը. «Բջջային հեռախոս՝ սմարթֆոն նոր, չօգտագործված, տուփերով, կրկնակի SIM, օպերացիոն համակարգը՝ Android 9.0, օպերատիվ հիշողությունը՝ 2 GB, ներքին հիշողությունը՝ ոչ պակաս 16 GB, հիմնական տեսախցիկ՝ 8 մեգապիկսել, դիմային տեսախցիկ՝ 5 մեգապիկսել, ցանց՝ 3G,4G/LTE,Wi-Fi:

Կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: *Երաշխիքային ժամկետն 1 տարի:* Սպասարկման կենտրոնի տվյալներն են՝ հասցե՝ Երեւան, Իսահակյան 3, Հեռ. +374 10 54 02 82, +374 91 67 76 44 Աշխատանքային ժամեր, ժամը 10:00-ից 19:00՝ բացի կիրակի օրվանից:»:

Հանձնաժողովի 25.06.2020թ.-ի թիվ 3 արձանագրության 5.3-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի աբողջական նկարագրում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված ներքին հիշողությունը՝ ոչ պակաս 16 GB ենթակա է հստակեցման՝ նշելով առաջարկվող ապրանքի ներքին հիշողության ստույգ ծավալը, ինչպես նաև նշված չէ, կտրամադրվի արդյոք տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար, ինչով պայմանավորված Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցել է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրության 5.3-րդ կետում նշված անհամապատասխանությունները:

«Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից որպես Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկում 25.06.2020թ.-ին ներկայացվել է թիվ 1.1 հավելվածը հետևյալ ձևով՝ «Բջջային հեռախոս՝ սմարթֆոն նոր, չօգտագործված, տուփերով, կրկնակի SIM, օպերացիոն համակարգը՝ Android 9.0, օպերատիվ հիշողությունը՝ 2 GB, ներքին հիշողությունը՝ 16 GB, հիմնական տեսախցիկ՝ 8 մեգապիկսել, դիմային տեսախցիկ՝ 5 մեգապիկսել, ցանց՝ 3G,4G/LTE,Wi-Fi: Կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: *Երաշխիքային ժամկետն 1 տարի:* Սպասարկման կենտրոնի տվյալներն են՝ հասցե՝ Երեւան, Իսահակյան 3, Հեռ. +374 10 54 02 82, +374 91 67 76 44 Աշխատանքային ժամեր, ժամը 10:00-ից 19:00՝ բացի կիրակի օրվանից: Ապրանքի մատակարարման հետ կտրամադրվի տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար:»:

Հանձնաժողովի 29.06.2020թ.-ի թիվ 4 արձանագրության 5.2-րդ կետի համաձայն՝ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից հրավերով նախատեսված անհամապատասխանությունները շտկվել են:

Հանձնաժողովի 01.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Նոութբուք Սթոր» ՍՊԸ-ի տնօրենը պահանջել է քարտուղարից որպեսզի իրեն տրամադրեն մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական

նկարագրերում հրավերի պահանջների նկատմամբ տեղ գտած անհամապատասխանությունների շտկված տարբերակները: Քարտուղարը, հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը, «Նոութբուք Սթոր» ՍՊԸ-ի տնօրենին տրամադրել է վերջինիս պահանջած փաստաթղթերը, որից հետո տնօրենը հայտնել է կարծիք այն մասին, որ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից առաջարկվող ապրանքը չունի երաշխիքային սպասարկում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ստուգել «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից հայտով առաջարկված «Itel» ֆիրմային բջջային հեռախոսների սպասարկման կենտրոնը, արդյոք հանդիսանում է արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոն:

Հանձնաժողովի 13.07.2020թ.-ի թիվ 7 արձանագրության 6.1-րդ կետի համաձայն՝ 02.07.2020թ.-ին «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից հայտով առաջարկված «Itel» ֆիրմային բջջային հեռախոսների որպես պաշտոնական սպասարկման կենտրոն հանդիսացող «ԱԴԴ» ՍՊԸ-ին (Ռեմզոն) ուղարկվել է գրություն հետևյալ բովանդակությամբ. *«խնդրում եմ տրամադրել իսկությունը հավաստող փաստաթուղթ, արդյոք Ձեր կազմակերպությունը հանդիսանում է «Itel» բջջային հեռախոսների արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնը»:* Նույն օրը, «ԱԴԴ» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով հավաստել է, որ վերջինս հանդիսանում է «Itel» բջջային հեռախոսների արտոնագրված սերվիս կենտրոն, սակայն հավաստող փաստաթուղթ չունի, անհրաժեշտության դեպքում կարող է գործընկերներին խնդրել տրամադրել այն, բայց գործընթացը ժամանակատար է /մոտավորապես մեկ շաբաթ/: Նույն օրը «ԱԴԴ» ՍՊԸ-ն նաև գրությամբ հայտնել է, որ հանդիսանում է «Itel» բջջային հեռախոսների արտոնագրված սերվիս կենտրոնը: 03.07.2020 թվականին «ԱԴԴ» ՍՊԸ-ին ուղարկվել է գրություն հետևյալ բովանդակությամբ. *«խնդրում ենք տրամադրել արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոն հանդիսանալու վերաբերյալ փաստաթուղթ»*, սակայն Մասնակցի կողմից գրությանը այդպես էլ արձագանք չի տրվել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մերժել «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը՝ տվյալների իսկության ստուգման արդյունքում իրականությանը չհամապատասխանելու հիմքով:

Գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, քանի որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ոչ մի նոր գնային առաջարկ չի ներկայացվել:

ООО "ТРАНССИОН ТЕХНОЛОДЖИ РУ" ընկերության գլխավոր տնօրենի կողմից 14.07.2020թ.-ին տրված նամակի համաձայն՝ «Itel» Ընկերությունը հանդիսանում է Թրանսսիոն խմբի դուստր ձեռնարկություն և «ԱԴԴ» ՍՊԸ-ն հանդիսանում է «Itel»-ի հեղինակավորված սերվիս կենտրոն Հայաստանի Հանրապետությունում:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Թոքաբանության ազգային կկենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բջջային հեռախոսների/սմարթֆոնների/ ձեռքբերման նպատակով 15.06.2020թ.-ին հայտարարված «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. Մասնակցի կողմից ապրանքի ներքին հիշողությունը նշվել է՝ ոչ պակաս 16 GB,

2. Մասնակցի կողմից նշված չէ, որ կտրամադրվի արդյոք տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար, թե ո՞չ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովն առաջարկել է Մասնակցին շտկել արձանագրված, վերը նշված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը ուսումնասիրելով գնման առարկա հանդիսացող ապրանքի տեխնիկական բնութագիրը, այն համադրելով Մասնակցի կողմից նույն չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի հետ, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից կայացված թիվ 3 արձանագրությունն, շտկման վերաբերյալ Մասնակցին ուղարկված ծանուցումը ու վերջինիս կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկված տարբերակը, գտնում է, որ Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի դրույթների խախտում, այն է՝ վերջինիս կողմից չի արձանագրվել Մասնակցի կողմից ներկայացված հայտին կից հավելված 1.1-ում՝ առաջարկվող և Հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրերում առկա նաև հետևյալ անհամապատասխանությունները, որոնք են՝

Հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ ապրանքը պետք է ունենա առնվազն 2 տարի երաշխիքային ժամկետ, այնինչ՝ Մասնակցի կողմից թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկել է 1 տարի երաշխիքային ժամկետ: Ընդ որում, պետք է արձանագրել, որ երաշխիքային ժամկետը չի փոխվել նաև Մասնակցի կողմից Պատվիրատուին ներկայացված՝ արդեն շտկված հավելված 1.1-ով:

Այլ կերպ ասած՝ Հրավերով պահանջվել է «*Երաշխիքային ժամկետն առնվազն 2 տարի»,* իսկ Մասնակցի կողմից առաջարկվել է *«Երաշխիքային ժամկետն 1 տարի»,* որը նույնպես ենթակա էր արձանագրման և շտկման:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են

միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված դրույթների համալիր վերլուծությունը ցույց է տալիս, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, համադրելով վերոգրյալները Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված սկզբունքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հանձնաժողովը պետք է արձանագրեր Մասնակցի հայտում առկա անհամապատասխանությունը և այն պատշաճ շտկված լինելու պարագայում նոր հրավիրեր վերջինիս բանակցությունների, քանի որ, ինչպես վերը նշվեց, հանձնաժողովի քարտուղարը գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավիրում է միայն ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին:

Բողոքներ քննող անձը հավելում է, որ նման պայմաններում Պատվիրատուն չի ապահովել Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքների պահանջների կիրառումը (գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, ուսումնասիրելով գնման առարկա հանդիսացող ապրանքի տեխնիկական բնութագիրը, այն համադրելով Մասնակցի կողմից նույն չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի հետ, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից կայացված թիվ 3 արձանագրությունը, շտկման վերաբերյալ Մասնակցին ուղարկված ծանուցումն ու վերջինիս կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկված տարբերակը, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ թիվ «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի հայտը բավարար գնահատելու մասին կայացված որոշումը կայացվել է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջների խախտումներով, այն է՝ Հանձնաժողովը չի արձանագրել Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունը՝ Հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին:

Ուստի սույն դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է կիրառի Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները և «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ին առաջարկ ներկայացնի շտկել սույն որոշմամբ արձանագրված՝ մասնակցի հայտում՝ թիվ 1.1 հավելվածում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա անհամապատասխանությունները և անհամապատասխանությունները շտկելուց հետո միայն հրավիրի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» Ա/Ձ-ի կողմից 20.07.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/85 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 13.07.2020թ. նիստի թիվ 7 արձանագրության 7.1 և 16.07.2020թ. նիստի թիվ 8 արձանագրության 9.1 կետերով կայացված որոշումները,

- ընդունել որոշում՝ նոր գների նվազեցման միաժամանակյա բանակցություն հրավիրելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**